

Թիւն առած է Մեծ Մովսէս Ա.ին քարոզներէն: Միւս կողմանէ Հայերը կատղած են եւ կարելի չէ զսպել, ուստի սկսաւ քարոզել, եկեղեցիներու մէջ ուղղափառներու դէմ խօսեցաւ, մէկ կողմանէ մեղմացընելով (կէօզ տաղը վերէրէք), եւ հակառակ կողման բարկութիւնն իջեցընելով, բայց երբ տեսաւ որ անօգուտ է, Պատրիարքին գրեց:

“Պատրիարքն ասիկայ տեսնելով՝ բարկացաւ, Գռնէն հրովարտակ մը հանել տուաւ: Հրովարտակին մէջ գրուած էր: Սեւագլուխք, քահանայք եւ ժողովուրդք, հաշտ ըլլան Սարրաֆ օղու սեւագլխին հետ, եւ անոր հրամանին հակառակ գործ չգործեն. չորս եկեղեցիներու բանալիները յանձնուին Սարրաֆ օղու Սարգիս սեւագլխին. եթէ քահանաներէն ընդդիմացող ըլլայ՝ մօրուքն ածիլեն եւ եկեղեցիէն արտաքսեն: Այս հրովարտակն երբ Գաղատիոյ ատենին առջեւ կարգացուեցաւ, կոիւք սաստկացաւ, ուղղափառներու նշանաւորներէն 25 հոգի Փաշայէն շղթայի դրուեցան, եւ շատ նեղութիւններէ ետեւ՝ 10 քսակ դրամ տալով ազատեցան:

“Այս կոիւէն ետեւ Սարգիս Ա. տեսաւ որ Գաղատիոյ մէջ հանդարտութիւն պիտի չգտնէ, մէկէն պիտի բամբասուի, ուրիշէն պիտի խածատի, կամացուկ մը թողուց Պոլիս գնաց: Յետոյ Եւրոպա անցաւ, շատ մնաց Հռոմ եւ Անետիկ, քանի մը գրքեր տպեց, ինչպէս Էֆիմէրտէ, Խորենացւոյ պատմութիւնը: Յետոյ Պոլիս դարձաւ Հայոց մէջ ապրեցաւ. բայց ներքին